

**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ**  
**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ**  
**ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ԵՎ ԼԻՏՎԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ**  
**ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՏԵՍՉՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ**  
**ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն և Լիտվայի Հանրապետության Ֆինանսների նախարարության հարկային տեսչությունը (այսուհետ՝ պայմանավորվող կողմեր)

Գիտակցելով հարկային օրենսդրության փոխադարձ ընկալման, կառավարման և գործնական կիրառման բարելավման հարցերում տեխնիկական համագործակցության կարևորությունը և արդյունավետությունը,

Ցանկանալով բարելավել հարկային տեղեկատվության փոխանակումը Հայաստանի Հանրապետության և Լիտվայի Հանրապետության հարկային մարմինների միջև,

Պայմանավորվեցին հետևյալի մասին.

### **Հոդված 1**

Պայմանավորվող կողմերը այս համաձայնագրի շրջանակներում կհամագործակցեն իրենց իրավասությունների սահմաններում՝ ազգային օրենսդրությանը և միջազգային պայմանագրերին համապատասխան:

Պայմանավորվող կողմերը կհամագործակցեն՝ կապված փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հարկային հարցերի շուրջ, մասնավորապես՝

1. հարկ վճարողների հաշվառում,
2. հարկային վարչարարություն,
3. հարկերից խուսափելու դեմ պայքար,
4. էլեկտրոնային հաշվետվությունների կիրառում,
5. հարկ վճարողներին մատուցվող ծառայություններ,
6. անձնակազմի ուսուցում և զարգացում,
7. տեղեկատվության փոխանակում,
8. աշխատանքային ռեսուրսների կառավարում,

9. ստուգումների համակարգի կատարելագործում,

10. ներքին աուդիտի համակարգ:

### **Հոդված 2**

Պայմանավորվող կողմերը պայմանավորվում են անհրաժեշտության դեպքում փոխանակել՝

1. փաստաթղթեր (իրահանգներ, մեթոդական նյութեր, տեղեկատվական հաղորդագրություններ), հարկային օրենսդրություն,
2. տեղեկատվություն հարկային հարցերի վերաբերյալ:

Պայմանավորվող կողմերը պայմանավորվում են՝

1. անցկացնել փորձագիտական ժողովներ, այդ թվում՝ խորհրդատվական նպատակներով,
2. իրականացնել մասնագետների փոխադարձ հրավերներ՝ մասնակցելու սեմինարների, գիտաժողովների, դասախոսությունների և վերապատրաստման դասընթացների,
3. իրականացնել հարկային գործընթացների բարելավման ուսուցման դասընթացներ:

### **Հոդված 3**

Սույն համաձայնագրի շրջանակներում համագործակցությունը պետք է ֆինանսավորվի հետևյալ սկզբունքով՝ ուղարկող պայմանավորվող կողմը պետք է հոգա ընդունող երկրի տարածքում իր ներակայացուցիչների կացության հետ կապված ծախսերը: Եվրոպական Միության ֆոնդերը կամ այլ միջազգային կազմակերպություններ կարող են ներգրավվել ֆինանսավորելու համատեղ գործունեությունը:

### **Հոդված 4**

Սույն համաձայնագրի շրջանակներում իրականացվող բոլոր գործողությունները, ներառյալ՝ փաստաթղթերի, տեղեկատվության փոխանակումը, տեղեկատվության բացահայտումը և կիրառումը, պետք է կանոնակարգվեն պայմանավորվող յուրաքանչյուր կողմի օրենսդրությամբ:

### Հոդված 5

Պայմանավորվող կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիրը կարող է փոփոխվել կամ լրացվել համապատասխան արձանագրության ստորագրման միջոցով, որը կկազմի սույն համաձայնագրի անբաժանելի մասը:

### Հոդված 6

Բոլոր վեճերը՝ կապված սույն համաձայնագրի մեկնաբանման կամ կիրառման հետ, կկարգավորվեն խորհրդատվությունների և բանակցությունների միջոցով:

### Հոդված 7


Սույն համաձայնագիրը կնքված է անորոշ ժամկետով և ուժի մեջ է մտնում ստորագրման պահից: Կողմերը կարող են դադարեցնել սույն համաձայնագրի գործողությունը՝ դիվանագիտական ուղիներով գործողությունը դադարեցնելու մասին գրավոր ծանուցագիր հանձնելու միջոցով: Սույն համաձայնագրի գործողությունը կդադարեցվի ծանուցումը ստանալու օրվանից 6 ամիս լրանալուց հետո:

Կնքված է ..... -ում *27.10*..... 2011թ, երկու բնօրինակից՝ հայերեն, լիտվերեն և անգլերեն, բոլոր տեքստերը հավասարազոր են, ցանկացած տարընթերցման դեպքում՝ գերակայում է անգլերեն տեքստը:

ՀՀ կառավարությանն առընթեր  
պետական եկամուտների կոմիտեի  
կողմից՝

Լիտվայի Հանրապետության  
Ֆինանսների նախարարության  
հարկային տեսչության կողմից՝

Գագիկ Խաչատրյան



Մոդեստաս Կասելիաուսկաս

